

ԿԱՆՈՒՆ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE

DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE

ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF

ST. GREGORY THE ILLUMINATOR

ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 21 Յոկտեմբեր 2018

2. Կիրակի Չկնի Սրբոյ Խաչին / ԹԻԻ 81

Dimanche 21 octobre 2018

6ème Dimanche après la Sainte Croix / NO. 81

Today's Bible Readings:

Galatians 4:3-18 / Mark 4:14-24 /

Les lectures de la Bible d'aujourd'hui:

Galates 4 :3-18 | Marc 4 :14-24 |

Պատարագիչ՝

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՍԱՐԳԱՐԵԱՆ
Հոգեւոր Հովիւ**

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Office Matines à 9 :30 - Առաւօտեան ժամերգութիւն 9:30-ին

La Sainte Messe à 10:30 - Ս. Պատարագ ժամը 10:30-ին

Office de Requieme à Midi - Հոգեհանգստեան Պաշտօն կէսօրին

**Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian,
Dn. Norayr Grigoryan, Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian**

Choirmaster: Mr. Sarkis Barsemian

Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca




ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS



ԳՎՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 4.3-18

3Նոյնպէս ալ մենք, երբ մանուկ էինք, աշխարհի սկզբունքներուն տակ ստրուկ էինք: **4**Բայց երբ ժամանակը լրումին հասաւ, Աստուած ղրկեց իր Որդին՝ որ կնոջմէ ծնաւ եւ Օրէնքին տակ մտաւ, **5**որպէսզի փրկանքով գնէ Օրէնքին տակ եղողները. որպէսզի մենք որդեգրուե՞նք ստանանք: **6**Եւ քանի որ դուք որդիներ էք, Աստուած ձեր սիրտերուն մէջ ղրկեց իր Որդիին Հոգին, որ կ'աղաղակէ. «Աբբա՛, Հայր»: **7**Հետեւաբար ա՛լ ստրուկ չես, հապա՛ որդի. ու եթէ որդի, ուրեմն՝ Աստուծոյ ժառանգորդը Քրիստոսի միջոցով:

8Ուրեմն այն ատեն երբ չէիք ճանչնար Աստուած, կը ծառայէիք անոնց՝ որ բնութեամբ աստուածներ չէին: **9**Սակայն հիմա որ ճանչցար Աստուած, կամ մա՛նաւանդ՝ ճանչցուեցար Աստուծմէ, ի՞նչպէս կը վերադառնար այն տկար եւ աղքատ սկզբունքներուն, որոնց դարձեալ կ'ուզէք ստրուկ ըլլալ: **10**Կը պահէք օրերը, ամիսները, ժամանակներն ու տարիները. **11**կը վախնամ ձեզի համար, որ գուցէ զուր տեղը աշխատած ըլլամ ձեր վրայ:

12Եղբայրներ, կ'աղերսե՛մ ձեզի, ինծի՛ պէս եղէք, որովհետեւ ես ալ ձեզի պէս եղայ. դուք բնա՛ւ վնասած չէք ինծի: **13**Դուք գիտէք թէ ի՛նչպէս՝ մարմինիս տկարութեամբ՝ աւետարանեցի ձեզի առաջին անգամ. **14**բայց մարմինիս վրայ կրած փորձութիւնս չանարգեցիք, ո՛չ ալ պժգացիք. հապա Աստուծոյ հրեշտակի մը պէս ընդունեցիք զիս, Քրիստոս Յիսուսի պէս: **15**Ուստի ո՛ւր է՝ ձեր այդ ատենուան երանութիւնը. քանի որ ես կը վկայեմ ձեզի թէ եթէ կարելի ըլլար՝ ձեր աչքերը պիտի խլէիք եւ զանոնք ինծի տայիք: **16**Միթէ ձեր թշնամի՞ն եղայ՝ ձեզի ճշմարտութիւնը խօսելով: **17**Անոնք նախանձախնդիր են ձեզի հանդէպ, բայց ո՛չ բարի նպատակով. նոյնիսկ կ'ուզեն մեզ վտարել, որպէսզի նախանձախնդիր ըլլաք իրե՛նց հանդէպ: **18**Սակայն լաւ է նախանձախնդիր ըլլալ բարիին հանդէպ՝ ամէ՛ն ատեն, եւ ո՛չ թէ միայն երբ ձեր մէջ ներկայ են:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 4.14-24

14 Յիսուս Յոզիին զօրութեամբ վերադարձաւ Գալիլեա, եւ անոր համբաւը տարածուեցաւ այդ գաւառին ամբողջ շրջակայքը: **15** Ինք կը սորվեցնէր անոնց ժողովարաններուն մէջ, ու կը փառաւորուէր բոլորէն:

16 Երբ եկաւ Նազարէթ, ուր ինք մեծցած էր, իր սովորութեան համաձայն Ճաբաթ օրը մտաւ ժողովարանը, ու կանգնեցաւ որ կարդայ: **17** Տուին անոր Եսայի մարգարէին գիրքը: Երբ բացաւ գիրքը, գտաւ այն տեղը՝ ուր գրուած էր.

18 «Տէրոջ Հոգին իմ վրաս է. որովհետեւ օծեց զիս աղքատներուն աւետարանելու, որկեց զիս կոտրած սիրտ ունեցողները բժշկելու,

19 գերիներուն՝ ազատ արձակում եւ կոյրերուն տեսողութիւն յայտարարելու, հարստահարութիւն կրողները ազատ արձակելու, Տէրոջ բարեհաճութեան տարին յայտարարելու»: **20** Յետոյ գոցեց գիրքը, տուաւ սպասաւորին, ու նստաւ: Բոլոր ժողովարանը եղողները իրենց աչքերը սեւեռած էին անոր վրայ: **21** Ուստի սկսաւ ըսել անոնց. «Այսօր այս գրուածը իրագործուեցաւ, ու ձեր ականջները լսեցին»: **22** Բոլորը կը վկայէին անոր մասին, կը զարմանային անոր բերանէն ելած շնորհալի խօսքերուն վրայ, եւ կ'ըսէին. «Ասիկա Յովսէփի որդին չէ՞»: **23** Ինք ալ ըսաւ անոնց. «Իրաւ դուք ինծի պիտի ըսէք սա՛ առածը. “Բժիշկ, դուն քե՛զ բուժէ: Ո՛րչափ բաներ լսեցինք՝ որ Կափառնայումի մէջ կատարուեցան. հո՛ս ալ ըրէ՛ քո՛ւ բնագաւառիդ մէջ”»:

Galatians 4.3-18

3 Even so we, when we were children, were in bondage under the elements of the world:

4 But when the fulness of the time was come, God sent forth his Son, made of a woman, made under the law, **5** To redeem them that were under the law, that we might receive the adoption of sons. **6** And because ye are sons, God hath sent forth the Spirit of his Son into your hearts, crying, Abba, Father. **7** Wherefore thou art no more a servant, but a son; and if a son, then an heir of God through Christ. **8** Howbeit then, when ye knew not God, ye did service unto them which by nature are no gods. **9** But now, after that ye have known God, or rather are known of God, how turn ye again to the weak and beggarly elements, whereunto ye desire again to be in bondage? **10** Ye observe days, and months, and times, and years. **11** I am afraid of you, lest I have bestowed upon you labour in vain. **12** Brethren, I beseech you, be as I am; for I am as ye are: ye have not injured me at all. **13** Ye know how through infirmity of the flesh I preached the gospel unto you at the first. **14** And my temptation which was in my flesh ye despised not, nor rejected; but received me as an angel of God, even as Christ Jesus. **15** Where is then the blessedness ye spake of? for I bear you record, that, if it had been possible, ye would have plucked out your own eyes, and have given them to me. **16** Am I therefore

become your enemy, because I tell you the truth? **17** They zealously affect you, but not well; yea, they would exclude you, that ye might affect them. **18** But it is good to be zealously affected always in a good thing, and not only when I am present with you.

Mark 4.14-24

14 And Jesus returned in the power of the Spirit into Galilee: and there went out a fame of him through all the region round about. **15** And he taught in their synagogues, being glorified of all. **16** And he came to Nazareth, where he had been brought up: and, as his custom was, he went into the synagogue on the sabbath day, and stood up for to read.

17 And there was delivered unto him the book of the prophet Esaias. And when he had opened the book, he found the place where it was written, **18** The Spirit of the Lord is upon me, because he hath anointed me to preach the gospel to the poor; he hath sent me to heal the brokenhearted, to preach deliverance to the captives, and recovering of sight to the blind, to set at liberty them that are bruised, **19** To preach the acceptable year of the Lord.

20 And he closed the book, and he gave it again to the minister, and sat down. And the eyes of all them that were in the synagogue were fastened on him. **21** And he began to say unto them, This day is this scripture fulfilled in your ears. **22** And all bare him witness, and wondered at the gracious words which proceeded out of his mouth. And they said, Is not this Joseph's son? **23** And he said unto them, Ye will surely say unto me this proverb, Physician, heal thyself: whatsoever we have heard done in Capernaum, do also here in thy country.

24 And he said, Verily I say unto you, No prophet is accepted in his own country.





Հոգեւոր Հոպիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն :

«Ուստի, ծառայ չես, այլ՝ որդի, եւ եթէ որդի ես, ապա եւ՝ ժառանգ Աստուծոյ» (Գաղ. 4:3-7):

Սքանչելի, խոստմնալից ու կեանք պարգեւող տողեր, սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ, որ Պօղոս Առաքեալը կը գրէ Գաղատացիներուն ուղղուած իր նամակին մէջ: Առաքեալը մեզի Աստուծոյ ժառանգներ ու որդիներ կը կոչէ, քանզի Աստուածորդիի փրկչական զոհագործութեան միջոցով որդեգրութիւն ընդունեցինք եւ կրկին Աստուծոյ զաւակներ կոչուեցանք: Երբ Արարիչ Աստուած ստեղծեց իր սիրելի զաւակին՝ մարդուն, իր պատկերն ու նմանութիւնը տուաւ անոր եւ անիկա այն մեծագոյն առանձնայատկութիւնն է, որուն միջոցաւ կը տարբերուինք մնացեալ բոլոր արարածներէն: Սակայն Աստուծոյ զաւակ ըլլալու երանելի վիճակը կորսնցուցինք դրախտին մէջ՝ մեր նախահօր պատուիրանազանցութեան հետեւանքով: Այն սարսափելի սխալը, իր մահաբեր հետեւանքով, կործանարար եղաւ ողջ մարդկային ցեղին համար եւ մարդուն զրկեց ամենամեծ շնորհքէն, որ ունէր: Մարդը այլեւս կորսնցուց Աստուծոյ զաւակը ըլլալու մեծագոյն պարգեւը ու մեղքի ստրուկը դարձաւ: Ան բազում դարեր դեգերեց մարդկութեան դառն պատմութեան ոլորաններուն մէջ՝ մերթ մօտենալով իր Արարիչին, մերթ հեռանալով Անկէ, արժանի չըլլալով Անոր «Հայր» կոչելու: Եւ այս ողջ ընթացքը կը սպասէր ներման, ողորմածութեան ու հրաշքի, որ մարդկութիւնը կրկին պիտի արժանանար Ամենակարողի բարեհաճութեան եւ յաւիտենական կեանքի ժառանգորդը դառնար: Երկնաւոր Հայրը եւս կը սպասէր: Ան կը սպասէր ժամանակի լրումին, այսինքն այն պահուն, երբ դեռեւս մանկան գիտակցական աստիճանին գտնուող մարդկութիւնը զարգացում ապրէր ու անցում կատարէր դէպի չափահասութիւն, երբ պատրաստ կ'ըլլար դուրս գալու չոր օրէնքի սահմաններէն ու մտնելու Քրիստոսի փրկարար սիրոյ դաշտը:



Սակայն մինչ մեզի պարզեւում այս մեծագոյն շնորհքին անդրադառնալը, սիրելի՛ հաւատացեալ եղբայրներ եւ քոյրեր, կը կամենայի քիչ մը խօսիլ այն օրէնքին մասին, որուն տակ մարդիկ կը գտնուէին մինչ Քրիստոսի մարդեղացումն ու Սուրբ Կոյսէն ծնիլը:

Հրեական միջավայրին մէջ օրէնքի վառ ներկայացուցիչներն էին քահանայապետերը, որոնք տաճարի հոգեւոր բարձր դասը կը կազմէին եւ իրենց այդ աստիճանը ժառանգաբար կը ստանային իրենց հայրերէն: Օրէնքի ներկայացուցիչ կը համարուէին նաեւ ղեւտացիները, որոնք տաճարի աւելի ցած դասի սպասաւորներ էին, քան քահանայապետերը: Կային նաեւ օրէնսգետներ, փարիսեցիներ ու սադուկեցիներ, որոնք իրարմէ կը տարբերուէին Մովսէսական օրէնքի մեկնաբանութեան ու անոր հետեւելու տարբերութեամբ: Սակայն անոնց կը միաւորէր մէկ տեսակետ մը. կրօնականութիւնը կամ աստուածաշտութիւնը անոնց համար կանոններու չոր հանրագումար մըն էր լոկ, ուստի եւ արտաքին բնոյթ կը կրէր միայն: Անոնք շաբաթը երկու անգամ խիստ պահք կը պահէին, տասանորդ կը վճարէին տաճարին, սակայն Աստուծոյ ծառայելու գործընթացին անոնք սրտով ու հոգիով չէին մասնակցեր: Անոնց համար այդ Մովսէսական օրէնքի հիման վրայ մշակուած կանոններու բազմահատորանոց գիրքերն էին միայն, որոնց բովանդակութիւնը իրենք անգիր կը սորվէին, որպէսզի կեանքի իւրաքանչիւր պարագային գիտնան, թէ որ կանոնը պէտք է կիրառել, սակայն իւրաքանչիւր կանոնն ալ, իր հերթին, իր բացառութիւններն ունէր: Խիստ ու յստակ տրուած հրահանգներ, որ կը թելադրէր Աստուած: Ահա այս էր կրօնի մասին ունեցած անոնց պատկերացումը, որ Քրիստոս եկաւ լրացնելու: Քրիստոսի աշխարհ գալով մարդկութիւնը իր նախկին կարգավիճակը վերականգնելու եւս մէկ հնարաւորութեան իրաւունք ստացաւ Բարձրեալին կողմէ: Այժմ հերթը մերն էր ընտրելու, թէ ովքեր ենք մենք՝ Աստուծոյ որդիներ, թէ՛ շարունակելու ենք ստրուկի ու ծառայի վերաբերմունք ցոյց տալը:

Այս դեպքին առնչութեամբ նկատի չունիմ զուտ կրօնական «ծառայ» հասկացողութիւնը, քանի որ ան մինչեւ այժմ կը գործածուի Աստուծոյ սպասաւորներու եւ Անոր ծառայութիւն բերող մարդոց նկատմամբ եւ ան շատ բարձր արժէք ունի այս պարագային: Այստեղ խօսքը կ'երթայ այն վերաբերմունքին մասին, որ մենք կը ցուցաբերենք առ Աստուած: Եկեղեցւոյ Հայրերը այս վերաբերմունքը կամ ծառայութիւնը երեք տեսակի կը բաժնեն՝ ստրուկի, ծառայի եւ որդիի: Երբ մենք Տիրոջ սուրբ կամքը կատարելու եւ Անոր ծառայելու որպէս ստրուկներ կը մօտենանք, ապա այդ կ'ընենք վախէն դրդուած: Ինչպէս ստրկատիրական ժամանակներուն ստրուկը իր տիրոջ յանձնարարութիւնը կը կատարէր, քանի որ հակառակ պարագային կը պատժուէր, այնպէս ալ մենք, եթէ Տիրոջը կը ծառայենք միայն պատիժի ու դժոխքի տանջանքներուն չարժանանալու վախէն, ապա ստրուկի հոգեբանութեամբ Աստուծոյ ծառայութիւն կը մատուցանենք: Եթէ կ'աշխատինք հնարաւորինս Աստուծոյ պատուիրանները պահել ու մեր

ծառայութիւնը բերել անոր՝ երկրի վրայ կամ երկնքին մէջ վարձքի ակնկալիքով միայն, ապա այս պարագային ալ մեր Երկնաւոր Յօրը կը մօտենանք որպէս ծառաներ: Սակայն Քրիստոս սորվեցուց մեզի Տէրունական աղօթքին մէջ Աստուծոյ «Հայր» կոչելը, եւ Մկրտութեան խորհուրդով ալ Անոր որդեգիրները դարձանք, ինչ որ կ'ենթադրէ, որ մենք ալ որդիի վերաբերմունք պիտի դրսեւորենք առ Հայրը: Արդ, եկէք միասին քննենք, սիրելի՛ հաւատացեալներ, թէ ի՞նչն է այդ երրորդ, բարձրագոյն կոչումը եւ ինչպե՛ս կրնանք այդ կիրառել մեր կեանքերէն ներս: Անոր համար բաւական է միայն նայիլ ծնողք-զաւակ մարդկային յարաբերութիւններուն: Մանաւանդ մեր Հայ աւանդական ընտանիքներուն մէջ շատ ակնառու է այն խորին յարգանքն ու ակնածութիւնը հօր նկատմամբ, որ բնականաբար հիմնուած է որդիական սիրոյ եւ հնազանդութեան վրայ: Հայրը ընտանիքի գլուխն է, ինամատարն ու պաշտպանը: Ան այն առաջին ու մեծ օրինակն է, այն հեղինակութիւնը, որ զաւակները ունին իրենց առջեւ: Եւ առողջ, ճիշտ ընտանիքներուն մէջ զաւակները կը հնազանդին իրենց հօրը, կը հետեւին անոր, որովհետեւ աներկբայօրէն կը վստահին ու կը սիրեն՝ անկեղծ, մաքուր, վախէ ու շահադիտութենէ զերծ սիրով:

Ո՛չ ստրուկին, ո՛չ ալ ծառային չի յուզեր, թէ ինչպե՛ս կ'ընթանան իրենց Տիրոջ գործերը, անոնց համար կարելորդ չպատժուիլն ու ժամանակին վարձատրուիլն է: Միայն զաւակն է, ժառանգորդն է, որ կը հետաքրքրուի ու կը մտահոգուի Յօր գործերով, եւ յօժարաբար պատասխանատուութիւն կը վերցնէ իր վրայ՝ թէ՛ Յօր գործերու յառաջխաղացման, եւ թէ՛ անոր՝ իր մասնակցութեան հարցին: Ահա այսպիսին պիտի ըլլայ մեր վերաբերմունքը առ Երկնաւոր Հայրը՝ անսահման վստահութեամբ, անկեղծ սիրով, յարգանքով ու ակնածանքով լեցուն: Չայն սիրելով է, որ պիտի բերենք մեր ծառայութիւնը, հետեւաբար այդ ծառայութիւնն ալ բնական պիտի համարենք, առանց այն հարցադրումներուն, թէ ինչո՞ւ պիտի ծառայեմ կամ ի՞նչ կը ստանամ անոր դիմաց. «Սիրէ քու Տէր Աստուածդ քու ամբողջ սրտովդ, քու ամբողջ հոգիովդ ու քու ամբողջ մտքովդ»: Այս է մեծագոյն և կարելորագոյն պատուիրանը: Երկրորդը ասոր նման է. «Սիրէ ընկերոջդ քու անձիդ պէս» (Մատթ. 22:37-39),- սորվեցուց Յիսուս Քրիստոս եւ իր ողջ երկրային ուղին այս պատուիրանին վկայութիւնը եղաւ մեզի համար: Քրիստոս աշխարհին սիրոյ նոր տեսակ մը բերաւ՝ անմնացորդ նուիրում ու զոհողութիւն պահանջող սեր: Այս սերն էր, որ Ամենակալ Աստուծոյ խաչը բարձրացուց եւ Անոր հրաշափառ յարութիւնն ալ ապացոյց եղաւ, որ այդ զոհաբերութիւնը ի զուր չէր: Քրիստոսի փրկչական սերը ազատեց մարդկութեան ծառայի կարգավիճակէն եւ բարձրացուց Աստուծոյ ժառանգներու կարգավիճակին: Քրիստոսի գալէն առաջ մեր Երկնաւոր Հայրը միայն Աստուած էր մարդկային ցեղին համար, իսկ Քրիստոսի շնորհիւ մենք Ամենակալին «Հայր» կոչելու պատիւն ունեցանք: Արդ, ողջ հոգիով զգանք մեզի ընծայուած այս շնորհքին ողջ մեծութիւնը, սիրելիներ: Գիտակցինք, որ Յիսուս Քրիստոսի շնորհիւ՝ մենք Անոր որդիները դարձանք

Եւ այլեւս ուրիշ կարգավիճակ չենք ունենար: Ինչպէս երեխան կրնայ մոլորուիլ, յանցանք գործել, շեղուիլ ծնողներու մատնանշած ուղիէն, բարկացնել անոնց, սակայն երբեք չդադրիլ զաւակ ըլլալէ, այնպէս ալ մենք՝ այլեւս Ամենակալի զաւակներն ենք, Ան ալ մեր բազումողորմ Յայրը: Այս ցնծալի աւետիսը մեզի կը բերեն Աւետարանները եւ կը կամենամ, որպէսզի անոնց բերած սքանչելի լոյսն ու ջերմութիւնը ձեր հոգիներուն մէջ ունենալով՝ ապրիք որպէս Բազումողորմ, Բարեգութ, Ողորմած, Գթառատ ու Ամենասիրող Յօր համերաշխ զաւակներ: Թող ձեր բարութենէն, խոնարհութենէն ու ցուցաբերած սեր ճառագայթող լոյսը ջերմացնէ ձեզի շրջապատողներուն սրտերը եւ անոնք ալ բերէ դէպի իրենց Սիրող Յայրը:

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը, սերը եւ խաղաղութիւնը թող ըլլայ ձեր բոլորին հետ: Ամէն:

Աղօթարար՝

Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան





ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ ՃԱՇԷՆ ՎԵՐՋ

Փառք քեզ, Տէր, փառք քեզ, փառքերով
թագաւոր, որ մեզի ուրախութեան կերակուր
տուիր եւ մեր սիրտը լեցուցիր քու ողորմութեանդ
լիութենէն. հիմա ալ լեցուր մեզ քու Սուրբ Հոգիովդ,
որպէսզի առջեւդ հաճոյքով կենանք եւ ոչ ամչնալով.
որովհետեւ դուն կը հատուցես ամենուն ըստ իրենց
գործերուն: Եւ քեզի կը վայելեն փառքը,
իշխանութիւնը եւ պատիւը, այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. Ամէն:



PRIÈRE APRÈS LE REPAS

Gloire à Toi Seigneur, gloire à Toi, Roi de
toutes les gloires, qui nous as donné une
nourriture de joie et qui as comblé nos cœurs
de ton infinie miséricorde. Emplis-nous
maintenant aussi de ton Esprit Saint, afin que
nous soyons dignes de paraître devant Toi et
non pas honteux, puisque tu viens et
récompenses chacun selon ses oeuvres. A
toi conviennent la gloire, la seigneurie et
l'honneur, maintenant et dans l'éternité de
l'éternité. Amen.



Եկեղեցական Տոնացոյց Յառաջիկայ Շաբթուան
Feast de l'église pour la Semaine Prochaine

Հոկտեմբեր – Octobre

22, Երկուշաբթի - Տօն Սրբոցն Ղուկկիանոսի

Հարիւրապետին որ հաւատաց ի խաչելութիւնն Քրիստոսի,
Յովսէփեայ Աստուածաօրն, Յովսէփեայ Արեմաթացոյն,
բարեկամին Քրիստոսի, Ղազարու եւ քերցն նորա Մարթայի եւ
Մարիամու

*Lundi 22 – Fête du chef de cohorte Lucien qui crut en la crucifixion
du Christ, de Joseph, le père de Dieu, de Joseph d'Armathie,
de l'ami du Christ, Lazare et de ses sœurs Marthe et Marie.*

23, Երեքշաբթի - Տօն Սրբոցն Թեոդիիտոնի քահանային,
Չենոնի Չինաւորին, Մակարայ, Եղոկսեայ եւ Ռամելայ

**Mardi 23 - Fête du St prêtre Théodinon, du soldat Zénon, de Magar, d'Eudoxe et
de Ramelos.**

24, Չորեքշաբթի – Պահք:

Mercredi 24 - Jeûne.

25, Հինգշաբթի - Տօն Սրբոց Խարիթեանցն, վկայիցն Արտեմեայ եւ
Քրիստաթորի, երկուց կանանցն Կալինիկեայ եւ Ակիւլինեայ:

**Jeudi 25 - Fête des Saints Kharithians, des martyrs Ardème et Christophire, des
deux femmes Caliniga et Agulina.**

26, Ուրբաթ - Պահք:

Vendredi 26 - Jeûne.

27, Շաբաթ – Տօն Սրբոց Երկոտասանից վարդապետացն Ռեթէոսի,
Դիոնէսիոսի, Սեղբետրոսի, Աթանասի, Կիւրղի Երուսաղէմացոյն, Եթրեմի
Խուրին Ասորոյ, Բարսղի Կեսարացոյն, Գրիգորի Նիւսացոյն, Գրիգորի
Աստուծաբանին, Եպիփանու Կիպրացոյն, Յովհաննու Ոսկեբերանին եւ
Կիւրղի Աղէքսանդրացոյն:

**Samedi 27 – Fête des Saints 12 docteurs, Réthéos, Dyonisios, Sylvestre,
Athanase, Cyrille de Jérusalem, Ephrèm Khouri le Syriaque, Basile de Césarée,
Grégoire de Nysse, Grégoire le Théologien, Epiphane de Chypre, Jean
Chrysostome et Cyrille d'Alexandrie.**

ՏՕՆԵՐ

Հինգշաբթի, 18 Հոկտեմբեր 2018

Ս. Դիոնիսիոս Արիսպագացիի, Տիմոթեոս եւ Տիտոս Առաքելներու Յիշատակութեան Օր

Ըստ ավանդութեան՝ Դիոնիսիոս Արիսպագացին Պօղոս առաքելի աշակերտ (Գործք 17:34) եւ Աթենքի նորահաստատ եկեղեցւոյ առաջին եպիսկոպոսը եղած է: Դարձի եկած է Աթենքի Արիսպագոս քաղաքին մէջ, Ս. Պօղոս առաքելի քարոզը լսելէ յետոյ: Ան ականատեսն է Տիրոջ խաչելութեան ժամանակ տեղի ունեցած խաւարման ու Ս. Աստուածածնի Վերափոխման: Ս. Դիոնիսիոսը Աստուծոյ խօսքը տարածած է Հռոմի, Գերմանիոյ, Սպանիոյ, Գալիայի (Ֆրանսա) մէջ: Անոր անունով յայտնի են բազմաթիւ աստուածաբանական երկեր:



Ս. Տիմոթեոսը Քրիստոսի 72 աշակերտներէն է: Ան ծնած է Լիւստրա քաղաքին մէջ եւ եղած է Պօղոս առաքելի մերձաւոր աշակերտներէն, որուն յաճախ առաքելը իր թուղթերուն մէջ «սիրելի որդի» կը կոչէ: Քրիստոնէական դաստիարակութիւն ստացած է մօր եւ մեծ մօր շնորհիւ, քանզի հայրը հեթանոս էր: Երբ Ս. Պօղոս առաքելը կը բժշկէ ի ծնէ կաղին, Տիմոթեոս կը հաւատայ Յիսուս Քրիստոսին եւ կը դառնայ առաքելին ուղեկիցը: Ս. Պօղոս առաքելը Եփեսոսի մէջ զինք կը ձեռնադրէ եպիսկոպոս: Տիմոթեոսին ուղղուած են Ս. Պօղոս առաքելի երկու թուղթերը: Ան քարկոծուած է Տիանա չաստուածուհիի տօնին ժամանակ՝ երբ կը փորձէր հեթանոսներուն ետ պահել դիւական զուարճութիւններէն՝ քարոզելով Աստուծոյ խօսքը: Ան նահատակուած է 96-98 թուականներուն, Եփեսոսի մէջ:

Ս. Տիտոսը նոյնպէս Քրիստոսի 72 աշակերտներէն է: Ան ծնած է Կրետէ քաղաքը, հեթանոս ընտանիքի մը մէջ: Դեռ երիտասարդ տարիքէն ճշմարտութիւնը գտնելու համար ուսումնասիրած է Յոյն փիլիսոփաներուն երկերը, սորված է Եբրայերէն՝ Հին Ուխտի գիրքերը կարդալու համար: Ան լսելով ու հաւատալով Յիսուս Քրիստոսին՝ դարձած է անոր աշակերտը՝ գործակցելով Ս. Պօղոս առաքելին հետ: Վերջինիս կողմէ ձեռնադրուած է ան Կրետէի եպիսկոպոս: Անոր ուղղուած է Պօղոսի նամակներէն մէկը: Ս. Տիտոս

Եղած է իր հօտին քաջ պաշտպանը, տարածած է Աստուծոյ խօսքը եւ կատարած է հրաշագործութիւններ:

Շաբաթ, 20 Հոկտեմբեր 2018

Ս. Թեոդոս Թագաւորի եւ Եփեսոսի Մանկանց Յիշատակութեան Օր

Սուրբ Թեոդոս թագաւորը եւ մեծահամբաւ զօրավարը, որուն տրուած է նաեւ՝ Մեծն Թեոդոս անունը, Քրիստոնեայ աշխարհին յայտնի է որպէս ուղղափառեան մեծագոյն ջատագով ու պաշտպան: 379 թուականին նշանակուելով Արեւելքի կայսր, բարեպաշտ Թեոդոսը առաջին հերթին կը վերադարձնէ նախորդ կայսրի հրամանով արքայութեան տրուած ուղղափառ բոլոր եպիսկոպոսները, որոնց մէջ կը գտնուէր նաեւ, ըստ «Վարք Սրբոցի», Հայոց Ներսէս Հայրապետը: Ուղղափառ հաւատքին զօրացման համար կարեւոր կը նկատուի 381 թուականին անոր հրամանով գումարուած Կ.Պոլսոյ տիեզերական ժողովը: Օրինակելի է անոր բարեպաշտ Քրիստոնեայի խոնարհ վարքը: Երբ Միլանի եպիսկոպոսը ի պատիժ Թեսալոնիկէի մէջ կազմակերպուած ժողովուրդի կոտորածին, կայսրին կ'արգիլէ մուտք գործել եկեղեցի, վերջինս խոնարհաբար կը հնազանդի եւ միայն 8-ամսեայ ապաշխարութենէն ետք, ոտք կը դնէ Աստուծոյ տաճարը:



Հայ Եկեղեցւոյ մէջ նոյն օրը կը նշուի նաեւ Եփեսոսի 7 Մանկանց Յիշատակութիւնը: Եփեսոսցի ազնուական 7 երիտասարդներ գաղտնի կը մկրտուին՝ ընդունելով Քրիստոնեական հաւատքը, որուն հետեւանքով ալ անոնք կը հալածուին Դեկոս կայսրին կողմէ եւ կը թաքնուին մօտակայ լեռան (Ողբոս) քարայրին մէջ: Այստեղ աստուածառաք քունով կը ննջեն անոնք 140 տարի եւ կ'արթնան միայն 389 թուականին՝ Թեոդոս բարեպաշտ կայսրին օրով: Երբ կը բացայայտուի աստուածային հրաշքը, թագաւորն ու համաքաղաքացիները ամենամեծ պատիւներով կը դիմաւորեն հալածուած Քրիստոնեաները: Վերադառնալով իրենց քարայրը, 7 երիտասարդները կրկին կը ննջեն, այս անգամ՝ յաւերժական քունով: Անոնք կը թաղուին նոյն քարայրին մէջ, որուն վրայ հետագային կը կառուցուի փառահեղ եկեղեցի մը:

Շաբաթ, 20 Հոկտեմբեր 2018

**Ս. Մատթեոս, Մարկոս, Ղուկաս
եւ Յովհաննէս
Աւետարանիչներու Յիշատակի
Տօն**

Ս. Մատթեոսը Տիրոջ 12 առաքեալներէն է, առաջին Աւետարանի հեղինակը: Մատթեոս անունը Յունական է, ան Եբրայերէն Ղեւի անունն է, որ կը նշանակէ Աստուածատուր: Ս. Մատթեոսը նախապէս Կափառնայ քաղաքին մէջ մաքսաւոր եղած էր: Անսալով Տիրոջ ձայնին՝ վաճառած էր իր ունեցուածքը, գումարը բաժնած էր աղքատներուն, դարձած էր Քրիստոսի հետեւորդը: Ան Աստուծոյ խօսքը քարոզած է Պարթեւաստանի եւ Պաղեստինի մէջ:



Ս. Մարկոս Աւետարանիչը Բառնաբայի եղբոր տղան էր՝ բնիկ Երուսաղէմցի: Կը կոչուէր նաեւ Յովհաննէս: Անոր մօր՝ Մարիամի տունը, Երուսաղէմի մէջ առաքեալներուն աղօթավայրն էր: Կը կարծուի թէ, այս այն Վերնատունն էր, ուր Յիսուս իր վերջին ընթրիքը կատարած է, իսկ Հոգեգալուստին՝ Քրիստոնէական եկեղեցին կը հիմնադրուի: Ան եղած է Ս. Պետրոս առաքեալի թարգմանիչը, ինչպէս նաեւ Պօղոսի եւ Բառնաբասի գործակիցներէն մէկը: Ս. Մարկոսը ամենակարճ Աւետարանի հեղինակն է: Աստուծոյ խօսքը քարոզած է Եգիպտոսի մէջ, ուր եւս ան նահատակուած է: Ս. Մարկոսը Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ հիմնադիրն է:

Ս. Ղուկաս Աւետարանիչը երրորդ Աւետարանի հեղինակն է: Ան ծնած է Անտիոքի մէջ եւ ըստ աւանդութեան, եղած է Քրիստոսի 72 աշակերտներէն: Ս. Պօղոս առաքեալի վկայութեան համաձայն՝ մասնագիտութեամբ եղած է բժիշկ: Ան լսելով Քրիստոսի քարոզներու մասին՝ եկած է Պաղեստին եւ հետեւած է Տիրոջը: Աստուծոյ խօսքը տարածած է Աքայայի, Լիպիայի, Եգիպտոսի եւ Թերաքի մէջ: Հռոմեացի Թեոփիլոսի խնդրանքով ան գրած է «Գործք Առաքելոց»-ը: Ըստ հին աւանդութեան՝ նահատակուած է Թերաքի մէջ:

Ս. Յովհաննէս առաքեալը 4-րդ Աւետարանի, երեք ընդհանրական նամակներու եւ «Յայտնութեան» գիրքի հեղինակն է: Յիսուս անոր համարած է «սիրելի աշակերտ»: Յիսուս այնքան կը սիրէր եւ կը վստահէր անոր, որ խաչելութեան պահուն Աստուածամօր յանձնեց անոր խնամքին: Ան մահացած է 100 թուականին, Եփեսոսի մէջ 95 տարեկանին:



Holidays

Saturday, October 20, 2018

Commemoration of the King St. Theodos and Children of Ephesus

King and distinguished Captain Theodos, who is called also Theodos the Great, is known to the Christian world as the greatest advocate and supporter of Orthodoxy.

In 379 being appointed the king of the East, pious Theodos allowed all the orthodox Bishops exiled upon the order of the previous king to return to their countries. According to the book “Life of the Saints” among them was the Armenian Pontiff St. Nerses. Another important step directed to the strengthening of the orthodox faith became the Ecumenical Council of Constantinople convened upon the order of the King Theodos in 381.

The modest behavior of the pious Christian is exemplary. When as punishment for the massacre of the people organized in Thessalonica the Bishop of Milan prohibited Theodos to enter the church, the king obeyed and entered the church only after repenting for 8 months.

On the day of commemoration of the King Theodos the Armenian Church commemorates also the memory of the 7 children of Ephesus. 7 noble young men



from Ephesus were secretly baptized and became Christians. For adopting Christianity they were persecuted by the king Dekos and hid themselves in the cave of the nearby mountain (Voghkos). By God's will they fell sleep in the cave for 140 years and woke up only in 389, during the period of reign of the king Theodos. When people became aware of that divine miracle, the king and the residents of Ephesus met the persecuted Christians with great respect and honor. Returning to their cave the 7 young men passed away. They were buried in the same cave, upon which later a magnificent church was built.


Saturday, October 20, 2018

Feast of the Evangelists Sts. Mathew, Mark, Luke and John

Evangelist St. Mathew is one of the twenty apostles of the Lord. He is the author of the first Gospel. The name of Matthew is the Greek version of the Hebrew name meaning God-given. His Hebrew name has been Levi. In the past he has been a tax collector in Capernaum. Then obeying to God's will he has sold his property, distributed the money to the poor and has become one of the followers of Jesus Christ. He has preached the Word of God in Parthia and Palestine.

Evangelist St. Mark was the nephew of Barnabas. He was born in Jerusalem. He was named also John. It was the house of his mother – Mary that was the place of prayer for the apostles. It is supposed that it was the place where Our Lord Jesus Christ had the Last Supper and where the Church was founded during the Pentecost. He has been the interpreter of St Peter, as well as the friend of St. Paul and Barnabas. He is the author of the shortest Gospel. He has preached the Word of God in Egypt, where he has been martyred he is the founder of the Coptic Orthodox Church.


Evangelist St. Luke is the author of the third Gospel. He was born in Antioch. According to the tradition he is one of the seventy-two disciples of Jesus Christ. According to St. Paul he has been a physician. Listening about the Lord's Preaching, Luke goes to Palestine and follows the Lord. He has preached the Word of God in Achaia, Libya, Egypt and Teba. He has written "The Acts of the



Apostles” upon the request of Theophilus of Rome. According to the tradition he has been martyred in Teba.


Evangelist St. John is the author of the fourth Gospel, three letters and the Revelation. He deserved the title of the “beloved disciple” of Christ. He was the son of the fisherman Zebedee and the brother of James. He is considered to be one of the two disciples of St. John the Baptist who followed Jesus (See Jn 1:37). Afterwards the Lord called him to Galilee and gave him the authority of apostle. John became one of the closest Disciples of Christ. Together with James and Peter he witnessed the “transfiguration” that came over Jesus while He was praying on a high mountain named Tabor, went to the valley of Gethsemane. Together with St. Mary, Holy Godmother, he stood near the cross and at the moment of crucifixion Jesus asked him to take care of the Holy Mother of God. Together with Peter he was the first who went to the tomb of Christ and later met Him near the Sea of Genneseret (or Sea of Galilee or Lake Kinneret or Lake Tiberias). Later we see him during the persecutions of Christians in Jerusalem and his success in preaching in Samaria. After the descent of the Holy Spirit John went to Asia Minor and settled down in Ephesus where he took care of the churches founded by Paul and wrote down the Gospel there. Roman Emperor Titus Flavius Domitianus (Domitian) exiled him to Patmos where he was given (and recorded) a vision from Jesus. In Patmos or Ephesus he wrote also his letters addressed to the faithful flock.

During the period of reign of Roman Emperor Nero he returned to Ephesus where he passed away in 100 AD, in Ephesus, at the age of 95.



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**



ԿԻՐԱԿԻ, 21 Յոկտեմբեր 2018

**ՊԵՆԻԱ ընտանիքի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր ԵԼ ՄԵԾ մօր՝**

**ԱՆՈՒՇ ՓԱՆՈՍՏԵԱՆԻ
(ANOUSH PANOSSIAN)**

Մահուան 2-րդ տարելիցին առիթով

**ՅՈՎՍԵՓ ՊԵՆԻՍԻ
(HOVSEP BANIS)**

Մահուան 7-րդ տարելիցին առիթով



**Տ. ԵԼ ՏԻԿ. Ասպետ ԵԼ Միրնա Պըչաքճեաններու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ հօր ԵԼ ՄԵԾ հօր՝**

ԵՐՈՒԱՆԴ ՊԸՉԱՔՃԵԱՆԻ

(YERVANT BICHAKEDJIAN)

Մահուան 7-րդ տարելիցին առիթով



ՆՈՒԻՐԱՏՈՒՄԻԹԻՆ ԵԿԵՂԵՅԻՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

*Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of October 2018
have been received with great appreciation*



CHURCH:

*Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian,
Mr. & Mrs. Roupen & Meline Arsever \$100, Manoir Gouin Seniors \$65,
Mr. Manvel Markosyan \$50*

“GOMIDAS” CHOIR 60th ANNIVERSARY:

Mr. & Mrs. Murat Ozcanian \$250

HOKEHANKISD:

THE LATE VATRAN BOZIKIAN:

Mr. & Mrs. Hagop Mouradian \$100

THE LATE MARIE

KHANAMIRIAN-SAHAGUIAN:

Mr. Boghos Sahaguian \$100

THE LATE NACCASHIAN FAMILY:

Mrs. Sosie Naccashian \$100, Mr. Vahan Naccashian \$50,

Mr. & Mrs. Sevag Gosdanian \$40

THE LATE MARASHLIAN FAMILY:

Mr. & Mrs. David & Ardemis Fisher \$50, Mr. & Mrs. Zareh Marashlian \$35,

Miss Takouhie Aghazarian \$20

THE LATE SUMBULIAN & ATTARIAN FAMILIES:

Ms Lucy Sumbulian \$200, Mr. Viken Attarian \$150





Website:
www.saintgregory.ca

Սիրելի հաւատացեալներ,

Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի, թէ յետայսու կարելի է այցելել
Եկեղեցւոյ **Կայքէջը - Website www.saintgregory.ca,**

ուր պիտի գտնէք Եկեղեցւոյ վերաբերող լուրերը, ձեռնարկներու
վերաբերեալ տեղեկութիւնները, կատարել Ձեր սրտաբուխ
Նուիրատուութիւնները եւ օգտուիլ ընձեռուած այլ
կարելիութիւններէն համացանցային դրութեամբ:

Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Dear Parishioners,

We are glad to inform you our Church's newly developed

Website: www.saintgregory.ca,

*where you will read the latest church news and events,
meanwhile you can also make your online church donations and
benefiting from other possibilities of our Website.*

Thank you for support!

Parish Council
Ծիսական Խորհուրդ



Յառաջիկայ Ձեռնարկներ

**Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 27 եւ
28, 2018**

**«Կոմիտաս» Դպրաց Դասի Հիմնադրութեան 60-Ամեակի
Տօնակատարութիւն –
Շաբաթ, 10 Նոյեմբեր 2018 երեկոյեան ժամը 8-ին «Մարի
Մանուկեան» սրահին մէջ:**

Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 2 Դեկտեմբեր 2018

**Մայր Եկեղեցւոյ Օծման 48-րդ Տարեդարձ –
Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018**

UPCOMING EVENTS

**Annual Bazaar – Saturday & Sunday -
October 27 & 28, 2018**

**“Gomidas” Choir the 60th Anniversary Celebration –
Saturday, November 10, 2018 at 8:00 pm
in the Church “Marie Manoogian” hall.**

**Children’s Christmas /CFFA –
Sunday, December 2nd, 2018**

**Church 48th Anniversary –
Sunday, December 9th, 2018**



**Ուշադրութիւն
մեր սիրելի
հաւատացեալներուն**



Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ: Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Ծիսական Խորհուրդ

Attention to our beloved parishioners,

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.

Parish Council



**Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդարանիստ Մայր Եկեղեցւոյ
2018 Տարեշրջանի Տօնացոյց**

Ամիս	Օր	Չեռնարկ
Յուլիտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պազար «Մարի Մանուկեան» սրահ
Նոյեմբեր	10, Շաբաթ	«Առնիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ս. Ծնունդ Եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ
	9, Կիրակի	Մայր Եկեղեցւոյ Օծման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

Կազմակերպութեամբ՝

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ



Տ Ա Ր Ե Կ Ա Ն

ՊԱԶԱՐ

Պատուոյ Հիւր՝

Ազնուափայլ Տիկին Արմինէ Շիրինեան

Շաբաթ 27 եւ Կիրակի 28 Հոկտեմբեր 2018
Ժամը 10:00-էն

Չեռային աշխատանքներ

Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն

Յատելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել
Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին



GOMIDAS" CHOIR THE 60TH ANNIVERSARY CELEBRATION

UNDER THE AUSPICES
HIS GRACE BISHOP ABGAR HOVAKIMYAN



Marten
Yorgantz



With Participation: Famous Singer
MARTEN YORGANTZ
& DJ SAKO

- FUN /SINGING /DANCING
- MUSIC

SATURDAY, NOVEMBER 10, 2018

AT 8:00 PM

IN THE CHURCH "MARIE MANOOGIAN" HALL

SUPPER & APPETIZERS
BY "LADIES COMMITTEE"

FOR RESERVATION PLEASE CALL:

- **MARAL BOGHOSSIAN (514) 279-3066**
 - **ARA GERIKYAN (450) 682-5565**
- OR (514) 947-4524 AFTER 5 PM**

DONATION \$50

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Պատանեկան Երաժշտական Խումբ



Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը կը վերսկսին
Կիրակի, 14 Յոկտեմբեր 2018-ին, կեսօրէ ետք, ժամը
1-ին:

Les pratiques de la chorale des Jeunes
recommencerons

Le dimanche, 14 octobre 2018 à 13:00 heures

Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ
հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de
l'église.

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու
հիմնական երաժշտութեան նորթաները, միաժամանակ պիտի
մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les
enfants auront l'opportunité d'apprendre les
bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի
բաղկանայ ժամանակակից, դասական եւ
կրօնական երաժշտական կտորներէ,
Ֆրանսերէն եւ Յայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales
contemporaines, classiques et religieuses, de langue française et
arménienne.



Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/

Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

SUNDAY SCHOOL

For the ages of 6-14 years old children

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
 - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուածքներ եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Քհնյ. Մարգարեան



*In a pleasant and friendly atmosphere, the
children will learn:*

- *Psalms & songs*
- *Armenian language skills*
- *Interesting stories & entertainments*
- *Fun & fascinating consecutive Fieldtrips*

*Sunday School Every Sunday
at 11:00 am*

*For more information and registration call to the
Church office
(514) 279-3066*

Fr. David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵԻՈՐ ԶՐՈՅՑ**



**Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ**

***BIBLE STUDY & INTERESTING
DISCUSSIONS***

BY FR. DAVID MARGARYAN

**Տեղի պիտի ունենայ ամեն Հինգշաբթի
երեկոյեան՝ ժամը 7-ԷՆ սկսեալ Եկեղեցւոյ մէջ:**

**Every Thursday Starting at 7:00 pm
in the Church.**

**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
մասնակից ըլլալու**

**Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի՝
ներկայացուցած Աստուածաշնչական
սիւրճերուն:**

Սուրճի ԵՆ թէյի հիւրասիրութիւն

**We invite all our beloved faithful to be present
to the bible sessions with spectacular biblical
subjects that will be presented
by Fr. David Margaryan.**

**Coffee and tea will be served
during the sessions.**

**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին
ներկայութիւնը:**

**Cordially we expect everyone's
presence.**

**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-
8008/ stgregorychurch@gmail.com**

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Յայտարարութիւն

Սիրելի հաւատացեալներ,

Կը տեղեկացնենք ձեզի թէ յետայսու

Ճիսական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը,

Երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, առիթը պիտի ընծայուի մեր հաւատացեալներուն խորհրդակցական հանդիպում մը ունենալու

Ճիսական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները, որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

**Շնորհակալութեամբ՝
Ճիսական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ**